ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ **2019**
**JANUARY-JUNE**



# ՏԵՂԵԿԱԳԻՐ
# NEWSLETTER

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan
Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia

www.redcross.am
redcross@redcross.am



## Փոխըմբռնման հուշագիր՝ Տավուշի մարզպետարանի և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև

**Ապրիլի 25-ին՝ Համագործակցության և փոխադարձ աջակցության մասին փոխըմբռնման հուշագիր կնքվեց ՀՀ Տավուշի մարզպետարանի և Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) միջև, որը ստորագրեցին ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը և ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը: Հուշագրի համաձայն՝ մարզպետարանը և ՀԿԽԸ-ն կհամագործակցեն՝ արտակարգ իրավիճակներին համատեղ նախապատրաստվելու և արձագանքելու նպատակով:**

Այդպիսով, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) կընգրկվի ՀՀ Տավուշի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի և Աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի կազմում, կազմակերպչական և փորձագիտական հարցերով (աղետներին նախապատրաստում և արձագանք, Որոնում ծառայություն, առաջին օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն և այլն) կաջակցի կամավորական արձագանքման թիմի համար նախատեսված վերապատրաստման դասընթացներին, ուսումնավարժանքներին և այլ միջոցառումներին, արտակարգ իրավիճակների ժամանակ կաջակցի տուժածներին՝ համապատասխան ծրագրերի ու Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման՝ աղետներին արձագանքման աղբյուրներով համապատասխան մարդասիրական օգնություն ստանալու միջոցով և այլն:

## «Մասնաճյուղերի զարգացումը հակամարտությունների և ճգնաժամերի համատեքստում. քաղած դասեր». աշխատաժողով

**«Մասնաճյուղերի զարգացումը հակամարտություն-ների և ճգնաժամերի համատեքստում. քաղած**

## MoU between the Tavush Regional Administration and Armenian Red Cross Society

**On 25 April, Memorandum of Understanding of Cooperation and mutual support was signed between the RA Tavush Regional Administration and Armenian Red Cross Society (ARCS), by Hail Chobanyan, Head of Tavush Region and Dr. Mkhitar Mnatsakanyan, ARCS President.**

According to the MoU, the Regional Administration and the ARCS will cooperate for the purpose of joint emergency preparedness and response.

ARCS will be involved in RA Tavush Regional emergency situations commission and Disaster Risk Reduction regional team, will support the trainings, simulation drills and other educational events of volunteer response teams with organizational skills and expertise (disaster preparedness and response, Tracing service, first aid, psycho-social support, etc..); in case of emergency situations, will support the affected people through relevant progarmmes and International Red Cross Red Crescent Movement humanitarian aid providing mechanisms.

## "Branch Development in conflict and crisis contexts: lessons learned workshop"

**"Branch Development in conflict and crisis contexts: lessons learned workshop" gathered in Yerevan the leaders and staff of Armenian, Georgian and Ukrainian Red Crosses, Danish Red Crosses, ICRC**





**դասեր». աշխատաժողով - քննարկումը 2 օրով մի տեղում հավաքել էր Հայկական, Վրացական և Ուկրաինական Կարմիր խաչերի ղեկավարներին ու աշխատակցիներին, Դանիական Կարմիր խաչի, ԿԽՄԿ գլխամասային և հայաստանյան գրասենյակի, ինչպես նաև ԿԽՄՖ տարածաշրջանային և Եվրոպական գոտու գրասենյակի ներկայացուցիչներին:**

Հանդիպման նպատակն էր վերլուծել վերջին 2-3 տարիներին ներդրված եռակողմ համագործակցային մոդելը, որով իրականցվում էր Ազգային ընկերությունների մարզային մասնաճյուղերի պլանավորված զարգացում, և պլանավորել հետագա անելիքներն այս ուղղությամբ:
ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, ողջունելով Կարմիր խաչի շարժման ներկայացուցիչներին Հայաստանում, ասաց.
Զարգացման ուղղությամբ գործունեություն իրականացնելիս միշտ էլ աշխատանք կա կատարելու, շնորհակալ ենք Կարմիր խաչի միջազգային կոմիտեին՝ այս ձևաչափի ներդրման գործում աջակցելու համար: Չափազանց կարևորում եմ համատեղ աշխատանքն ու գործընկերությունը, կարծում եմ, որ սա միակ ձևաչափն է, որ հնարավորություն է տալիս զարգացում ապահովել:
Մասնակիցները ծանոթացան իրականացված աշխատանքի հետ և աշխատեցին հետագա քայլերի պլանավորման ուղղությամբ:

## Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրը նշվեց Երևանի մետրոյում

**Մայիսի 16-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ)՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի և Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, Երևանի Մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանում կազմակերպել էր հանրային միջոցառում, որի ընթացքում ՀԿԽԸ կամավորները տարածեցին Կարմիր խաչի Շարժումը լուսաբանող նյութեր, փուչիկներ և շոկոլադներ, հատուկ կայանում ցուցադրեցին Առաջին օգնության հմտություններ:**

Երևանի Մետրոպոլիտենի «Երիտասարդական» և «Հանրապետության» կայարաններում տեղադրվել էին նաև Շարժումը լուսաբանող պաստառներ:



**Head office and Armenian delegation, as well as IFRC regional and Euro zone representatives for 2 days.**

The aim of the workshop is to analyze the effectiveness of tripartite cooperation model, by which planned development of National Society Regional Branch development has been implemented, and plan further steps.

Dr. Anna Yeghiazaryan, ARCS Secretary General greeted the Red Cross representatives in Armenia, saying. "There is always much work to do in terms of development, and we are thankful to the ICRC for supporting this model. I consider joint activities and partnership as very important way of collaboration, I think this is the best model, which gives an opportunity to ensure development".

The participant got acquainted with the achievments and worked on the further steps development.

## World Red Cross Red Crescent Day was celebrated in Yerevan Metro

**On May 16, the Armenian Red Cross Society (ARCS), in cooperation with the International Committee of the Red Cross (ICRC) and the Yerevan Municipality, organized a public event at Yerevan Metro "Yeritasardakan" station, where the ARCS volunteers distributed Red Cross information materials, balloons and chocolates with Red Cross emblem. First Aid skills were demonstrated in special stage.**

Posters covering the Red Cross Movement were placed in Yerevan Metro "Yeritasardakan" and "Hanrapetutyan" Stations.



Միջացառումը նվիրված էր Մայիսին 8-ին՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային Շարժման համաշխարհային օրվան:

## Աղետնետներին արձագանքման թիմերը վերապատրաստվեցին

Հայկական Կարմիր խաչի ընկերության չորս մարզերի՝ Վայոց ձորի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի արագ արձագանքման թիմերի համար հունիս ամսին կազմակերպվել էին ուսումնավարժանքներ՝ արտակարգ իրավիճակներում արագ և ճիշտ արձագանքման հմտությունները բարելավելու նպատակով:
Վարժանքներին մասնակցել են նաև ինքնակառավարման մարմինների և մարզային փրկարարական ծառայության ներկայացուցիչներ, ոստիկաններ, կամավորներ:



Վարժանքի սցենարը Սյունիքում, Գեղարքունիքում և Տավուշում եղել է նույնը՝ խոշոր ավտովթար, իսկ Վայոց ձորում՝ խոտածածկի հրդեհ՝ տուժածներով:
ՀԿԽԸ Կապանի գրասենյակում վարժանքը սկսվեց ահազանգով՝ նախնական տվյալների համաձայն, վթարի ենթարկված քաղաքացիները ստացել էին տարբեր աստիճանի վնասվածքներ և ունեին Առաջին օգնության կարիք:

Սյունիքի մարզի Աղետներին արձագանքման թիմն



The event was dedicated to the World Red Cross and Red Crescent Day.

## Simulation exercise for ARCS Disaster Response Teams

ARCS Disaster Response Teams of Vayots dzor, Gegharkunik, Tavush and Syunik, simulation drills were organized to improve their skills of quick response in emergency situations.
Local authorities, rescue service representatives, policemen and volunteers participated in simulations as well. The exercise scenario of large car crash was the



same in Syunik, Gegharkunik and Tavush, and grass fire with victims, in Vayots dzor.
The simulation started with an alarm call in ARCS Kapan office, according to the preliminary data, the passengers of the crashed cars had several types of injuries and needed First Aid.

Disaster Response Team of Syunik Region arrived in the



անհապաղ ժամանեց դեպքի վայր, գործողությունների կազմակերպման և համակարգման համար հիմնեց ժամանակավոր դաշտային կենտրոն իր անհրաժեշտ պարագաներով և սկսեց Առաջին օգնություն տրամադրել տուժածներին:

Հաջորդ օրը՝ հունիսի 12-ին հրդեհաշիջման ուսումնավարժանք էր Վայոց ձոր մարզի Մալիշկա համայնքում: Կազմակերպված միջոցառմանը իրենց արդյունավետ և ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին՝ Արտակարգ իրավիճակների նախարարության Վայոց ձորի մասնաճյուղը, հրշեջ-փրկարարական ջոկատը, Եղեգնաձոր ԲԿ-ի շտապ օգնությունը, Վայոց ձորի մարզպետարանը՝ փոխմարզպետ Ռազմիկ Տոնոյանի գլխավորությամբ:

## Անվտանգ արյուն բոլորի համար

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ապրիլի 7-ին՝ Հունիսի 14-ին՝ Արյան դոնորի համաշխարհային օրը, Հայկական Կարմիր խաչի ընկերության աշխատակիցներն ու կամավորները միացան համաշխարհային #GiveBlood արշավին և արյուն հանձնեցին Ռ.Հ. Յոլյանի անվ. արյունաբանական կենտրոնում:



## Առաջին օգնություն հանրային միջոցառումների ժամանակ

Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության թիմը հերթապահություն է անցկացնում հանրային միջոցառումների ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում




crash site immediately, established a temporary field center for response action organization and coordination with necessary equipment and started providing First aid to the injured.

On the next day, simulation in Malishka community of Vayots dzor region started. Vayots dzor MES branch, Fire-rescue brigade, Yeghegnadzor medical center emergency team, and deuputy head of Vayots dzor governors office Razmik Tonoyan, actively participated in the event.

## Safe blood for all

On 14 June, World Blood Donor Day, Armenian Red Cross staff and volunteers joined the World #GiveBlood campaign giving blood in Blood Center named after R.H.Yolyan.



## First Aid at Public Events

ARCS First Aid Team is on duty at public events, providing First aid, when necessary.



օգնություն ցուցաբերելով մարդկանց:
Փետրվարի 16-ին ՀԿԽԸ ԱՕ թիմը «Ապարանի ձմեռ» փառատոնի ընթացքում առաջին օգնություն էր ցուցաբերում տուժածներին, իսկ ապրիլի 24-ին՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում բացի Առաջին օգնության տաղավարում հերթապահելուց, կամավորներն օգնում էին նաև խորանում դասավորել ծաղիկները:

On 16 February, ARCS FA Team was on duty at "Aparan winter" festival, and on 24 April, volunteers were helping to stow the flowers inside the memorial.

## Եվրոպայի օրն ու Տոլմայի փառատոնը

**Հայկական Կարմիր խաչի ընկերության ավելի քան 100 կամավորներ և անձնակազմի անդամներ մասնակցեցին Եվրոպայի օրվան նվիրված միջոցառումներին. Սկանդինավյան քայլք՝ ԵՄ դեսպանի մասնակցությամբ, ապա՝ տեղեկատվական ցուցահանդես Հյուսիսային պողոտայում:**

ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկին ՀԿԽԸ տաղավարի մոտ շնորհակալություն հայտնեց Կարմիր խաչին՝ ակտիվ մասնակցության համար:

Ավանդական, ամառային, հալեպահայության (սիրիական)՝ ավելի քան 4000 տոլմա էր պատրաստվել Հայկական և Գերմանական Կարմիր խաչերի բարեկամության թիմի կողմից՝ մայիսի 19-ին Զվարթնոց տաճարի տարածքում կազմակերպված Տոլմայի 9-րդ միջազգային փառատոնի ժամանակ:
Վաճառված տոլմայից ստացված գումարը կուղղվի ՀԿԽԸ մարդասիրական գործունեությանը:

## EU Day and Tolma festival

More than 100 Armenian Red Cross Society volunteers and staff participated in Europe Day concluding celebrations in Yerevan.
Nordic walking with the EU Ambassador and Info Fair at the Northern Avenue.
The EU Ambassador Piotr Świtalski thanked the Red Cross for active participation.

More than 4000 Traditional, Summer and Aleppo Armenian (Syrian) tolma were prepared by Armenian and German Red Cross Friendship Team during 9th Tolma International Festivale on 19th May, at Zvartnots temple. Themoney raised from selling of tolma, will be directed to the ARCS humanitarian activities.





## Կարուձևի դասեր հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի համար

ՀԿԽԸ Վարդենիսի համայնքային մասնաճյուղի 2 կամավորներ՝ սեփական նախաձեռնությամբ և Կենտրոնական գրասենյակի համապատասխան աջակցությամբ, ամեն տարի հաշմանդամություն ունեցող երեխաների տասը մայրերի համար կարուձևի դասընթացներ են անցկացնում, որի շնորհիվ վերջիններս կարողանում են աշխատանք գտնել:

## Sewing sessions for women with children with disabilities

Two volunteers of the ARCS Vardenis community branch, with their own initiative and support from the Headquarters, every year conduct sewing sessions for 10 women, who have children with disabilities. Thanks to the skills obtained, these women may find jobs and have their own income.







## Նորարարական երիտասարդական ճամբար

**«Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» (ԻՐԻՍ) ծրագրի երիտասարդների կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակներում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը հունիսի 22-24-ը Ծաղկաձորում կազմակերպել էր նորարարական երիտասարդական ճամբար՝ ընտրված 20 սիրիահայ և տեղացի մասնակիցների համար:**

Ճամբարում երիտասարդները մասնակցեցին տարբեր դասընթացների՝ համայնքների խնդիրներին ստեղծագործ մոտեցումներով լուծումներ գտնելու և ծրագրեր իրականցնելու թեմաներով: Երիտասարդների համար նաև կազմակերպվել էր լուսանկարչության պարապմունք:
20 մասնակիցները հնարավորություն ունեն մասնակցելու փոքր դրամաշնորհային մրցույթի՝ իրենց նախաձեռնություններն իրականացնելու համար:
Ճամբարն ընթացավ ընկերական և ջերմ մթնոլորտում:

## Innovative Youth Camp

In the frame of Increases Resilience of Syrian Armenians and Host Population (IRIS) program's Youth Resilience component Armenian Red Cross Society organized Innovative Youth camp in Tsakhkadzor on 22-24 June for 20 selected Syrian and local youth.
20 participants will receive seed grants to implement their programs. Young people took part in various training sessions on community issues, finding creative solutions and implementing projects.
A photo-workshop was also organized for the youth.
Participants have the opportunity to take part in a small grants competition for their initiatives. The camp was in a friendly and warm atmosphere.



## «Ամենն ալ լավ պիտի ըլլայ». Զվարթ Բարսումյան

Մեկ զանգ ու՝ վերջ, բավական էր լսել Կարմիր խաչի անունն ու, առանց որևէ հարցի, Զվարթ Բարսումյանն արդեն պատրաստ է մեզ ընդունել իր փոքրիկ ու տաքուկ անկյունում՝ պատմելու իր ու որդու կյանքի պատմությունը: Չնայած բազում դժվարություններին, լավատեսությունը կարծես տիկին Զվարթի բնավորության անբաժան գիծն է, ամեն պատմությունից հետո հետո թախծոտ ու հույսով լի հայացքը սևեռելով հեռուն ասում է՝ «Ամենն ալ լավ պիտի ըլլայ»:

Սիրիայում ծայր առած պատերազմի հետևանքով շատ հայեր տեղափոխվեցին Հայաստան՝ թողնելով իրենց տարիների ստեղծածն ու վաստակածը:

2013 թվականին տիկին Զվարթի որդին եկել էր Հայաստան՝ ուսումը շարունակելու: Մեկ տարի անց ինքն էլ ամուսնու հետ պետք է տեղափոխվեր, սակայն վերջինս անսպասելիորեն մահացավ: Արդեն մենակ եկավ որդու մոտ:

Տիկին Զվարթը Հալեպում էլ բավական մոտ էր հայկական արմատներին ու մշակույթին. տարբեր մշակութային կենտրոնների անդամ էր, երգում էր «Զվարթնոց» երգչախմբում: Այնպես որ Հայաստանում մշակութային ինտեգրումն ավելի արագ եղավ, քանի տնտեսականը: Այստեղ էլ օգնության եկավ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը: Տիկին Զվարթը որոշել էր խոհարարությամբ զբաղվել, և, ստանալով Հայկական Կարմիր խաչից ստանալով տարբեր կենցաղային սարքավորումներ միկրոալիքային վառարան, սառնարան)՝ կարողանում է պատվերներ ընդունել: Բացի այդ էլ ֆուրշետի դասընթացների է հաճախում:

Երբ 2018 թվականի հուլիսից մեկնարկեց «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» ծրագիրը ("Increased Resilience of Syrian Armenians and Host Population" (IRIS) Programme), որը ղեկավարվում է Ավստրիական Կարմիր խաչի կողմից իրականացվում է Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ), Հայկական Կարիտասի, ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի, Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի կողմից՝ համընկերությամբ, տիկին Զվարթն արդեն հնարավորություն ստացավ օգտվելու նաև բնակվարձի փոխհատուցման աջակցությունից (ծրագրի շրջանակներում 100 սիրիահայ ընտանիք ամեն ամիս ստանում է 100 եվրոյին համարժեք դրամ):

- Կարմիր խաչը ընտանիքս է, այդ աղջիկներին, տղաներին շատ կսիրեմ, իրենց կեցվածքն է՝ հոգատարությունը, սերը որ կցուցնեն, ժպիտներն իրենց աչքերուն, կզգաս, որ անկեղծություն կա, կեղծ բան մը չի կայ: Փառք Աստծո, որ կա Կարմիր Խաչը և հետաքրքրված են մեզմով, չեն անտեսած, - ասում է նա:

Որդին ավարտել է Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարանը, այժմ էլ սովորում է նույն համալսարանի մագիստրատուրայում՝ ծրագրավորող է, ժամանակավորապես զբաղվում է հեռախոսների վերանորոգմամբ: Չնայած ունի լավ հեռանկարներ, չեն պատրաստվում բնակություն հաստատել այլ ափերում.

- Ինքզինքս չեմ կարող երևակայել ուրիշ տեղ: Փողն ամեն ինչ չէ, կարևորը մարդ մնաս, երբեմն մարդիկ կհարստանան կմոռանան իրենց մարդ ըլլալը, երբեմն վատ պայմաններն կհուզին, բայց լավ կըլլա, իրատես եմ, - վստահեցնում է նա:

Ընթերցանություն ու արվեստ շատ սիրող ու գնահատող տիկին Զվարթը, անկախ դժվարություններից հույս ունի, որ ամեն ինչ լավ է լինելու, սրտում փափագ ունի սեփական տունն ունենալ, և զավակին տեսնել երջանիկ, վստահ է, որ դա էլ կիրականանա. չէ՞ որ ամեն ինչ լավ է լինելու:

## Zvart Barsumian: "Everything will be all right"

One phone call from the Red Cross was enough to be invited and warmly greeted in Zvart Barsumyan's small house. She was ready to tell her and her son's story. The first thing you notice is, that despite of hardships and difficulties, Mrs. Zvart is full of optimism; looking far away with eyes full of sadness and hope, she repeats in sweet Wester



Armenian: "Everything will be fine".

After the war in Syria, started from 2012, many Armenians fled to Armenia, leaving behind all they hag earned and created during their lives.

In 2013, Mrs. Zvart's son started his studies in one of Universities in Armenia, she had planned to join him with his husband in a year, but he suddenly died. She arrived in Armenia alone.

Mrs. Zvart was very active women, she loves art and music, and was a member of number of cultural centers in Alleppo, for example of "Zvart" choir. She was very close to her national roots, and it made easier her cultural integration in Armenia. But the economic side of the process was not that easy, and here the Red Cross was the first to support her. Mrs Zvart was a great cooker, like many other Syrian Armenian women, who had never worked before. Now, the new circumstances, made her to think of using her abilities to ensure her stable income. She applied to Armenian Red Cross Society and received microwave oven and refrigerator, which gave her an opportunity to start her small business.

When the ("Increased Resilience of Syrian Armenians and Host Population" (IRIS) Programme launched in July, 2018, which is leaded buy Austrian Red Cross and being implemented in consortium with Armenian Caritas, SME Cooperation Association, Centre for Coordination of Syrian Armenians' Issues, Mrs. Zvart benefits also from housing support ( in the frames of the project 100 families receive 100 EUR monthly).

"The Red Cross is my family, I love these guys and ladies, their care, love and support, their smiles and shining eyes are precious, you feel that they are honest and kind. Thanks God, the Red Cross doesn't forget us", she says.

Her son is now MA student in Polytechnic University, he is a software engineer. Even though he has good career perspectives abroad, they do not plan to leave the country.

"I can not imagine living in any other place, than Armenia. Money is not the most important thing in the world. The most important is Humanity. Sometimes people forget about that, when they live hard life. But I am sure, that everything will be fine", she assures.

This woman, who loves art and reading, and believes in better future, dreams only to have her own home and see her son living happy, because everything will be all right.